ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Նաիրի Զարյան փողոցը (սկսվում է Հր.Քոչարի Վրացական փողոցների հատույթից՝ հասնում Ազատության պողոտա)՝ նրբանցքով (սկսվում է Զարյան փողոցի սկզբից, հասնում Կոմիտասի պողոտա), անվանափոխել գրող, բանաստեղծ, արձակագիր, արվեստաբան, գրականագետ Կոստան Զարյանի անվամբ՝ «Կոստան Զարյան փողոց», «Կոստան Զարյան փողոց, 1-ին նրբանցք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1930-ականների երկրորդ կեսին Խորհրդային Հայաստանում սկսվեցին ստալինյան զանգվածային ռեպրեսիաները: 1936թ. հուլիսին խորհրդահայ առաջնորդ Աղասի Խանջյանի խորհրդավոր սպանությունից (պաշտոնապես ներկայացված որպես «ինքնասպանություն») հետո Լավրենտի Բերիայի ղեկավարությամբ Հայաստանում սկսվեց քաղաքական և մշակութային դաշտի «մաքրազարդման» գործընթաց:

Այդ տարիներին մթնոլորտը լցված էր կասկածամտությամբ. ցանկացած շեղում խորհրդային գաղափարախոսությունից կարող էր համարվել դավաճանություն՝ հանգեցնելով աքսորի կամ նույնիսկ մահապատժի: Ստալինյան ռեպրեսիաների արդյունքում բազմաթիվ հայ գրողներ՝ Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, Գուրգեն Մահարին և ուրիշներ, հայտվեցին պետական ապարատի թիրախում: Նրանցից շատերը 1936-1937 թվականներին ձերբակալվեցին շինծու մեղադրանքներով, ենթարկվեցին բռնաճնշումների, իսկ շատերի կյանքն ավարտվեց բանտերում կամ գնդակահարությամբ: Այս ֆոնին պետք է դիտարկել Նաիրի Զարյանի պահվածքն ու նրա դերը Ակսել Բակունցի ճակատագրում:

Նաիրի Զարյանը (իսկական անունը՝ Հայաստան Եղիազարյան) 1930-ականներին դասվում էր խորհրդային գաղափարախոսությանը լիովին հավատարիմ գրողների շարքին: Նա 1930թ. գրել էր «Ռուշանի քարափը» հեղափոխական պոեմը, իսկ 1935թ. Ստալինին նվիրված բանաստեղծության համար ստացել էր Լենինի շքանշան:

1936թ. Աղասի Խանջյանի սպանությունից հետո Նաիրի Զարյանը հանդես եկավ հրապարակային հարձակումներով Խանջյանի մտերիմ գրողների դեմ: 1936թ. հուլիսի 17-ին նա «Գրական սերունդ» պարբերականում տպագրեց հոդված՝ «Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության» վերնագրով, որտեղ մեղադրել է Եղիշե Չարենցին, Ակսել Բակունցին և այլ գրողներին «ազգային շեղումների» ու «տրոցկիստական» գաղափարների տարածման մեջ:

Զարյանի հրապարակումը հստակ ազդանշան էր, որը համահունչ էր Ստալինի կողմից նախաձեռնված ռեպրեսիաների ալիքին: Նա փաստացի պիտակավորել է իր ավագ գործընկերներին որպես «ժողովրդի թշնամիներ», այդպիսով նպաստելով նրանց դեմ հետապնդումների օրինականացմանը:

Խանջյանի սպանությունից մեկ ամիս անց 1936թ. օգոստոսի 9-ին ձերբակալվել է Ակսել Բակունցը: Նրա դեմ առաջադրված մեղադրանքները եղել են նույնատիպ այն մեղադրանքներին, որ արդեն շրջանառվել են մամուլում: Նրան վերջնականապես մեղադրել են «տեռորիստական տրոցկիստական կազմակերպության» անդամ լինելու մեջ, և 1937թ. հուլիսի 7-ին նրան դատապարտել մահապատժի:

1936թ. հոդվածում Զարյանը մասնավորապես մեղադրել է Բակունցին և նրա

«նացիոնալիստական-տրոցկիստական խմբակը» Հայաստանի սահմանների հարց բարձրացնելու և թուրքերի նկատմամբ ատելություն սերմանելու մեջ: Այս ձևակերպումները հետագայում կրկնվեցին նաև ՆԿՎԴ-ի պաշտոնական մեղադրանքներում, ինչը վկայում է, որ Զարյանի հայտարարություններն ուղիղ ազդեցություն են ունեցել:

Նաիրի Զարյանի և Ակսել Բակունցի ողբերգական ճակատագրերը փոխկապակցված են: Զարյանը եղել է ստալինյան գաղափարախոսության ակտիվ ջատագովը և իր հրապարակային ելույթներով նպաստել է Բակունցի պիտակավորմանը որպես «ժողովրդի թշնամի»: Չկա ապացույց, որ Զարյանն անձամբ մասնակցել է Բակունցի ձերբակալմանը կամ դատավարությանը, սակայն նրա հրապարակային հոդվածներն ու ելույթները դարձել են այն քարոզչական հենքը, որի վրա կառուցվել են հետագա բռնաճնշումները:

Ստալինի մահից հետո, երբ ռեպրեսիաները սկսեցին վերագնահատվել, Զարյանին նույնպես մեղադրել են ստալինյան ռեպրեսիաներին նպաստելու մեջ: 1950-ականներին Ավետիք Իսահակյանը հրապարակայնորեն մատնանշել է Զարյանի հավատարմությունը Ստալինին՝ կասկածի տակ դնելով նրա գրական արժանիքները: Ի պատասխան՝ Զարյանը 1969թ. Խորհրդային Հայաստանի ղեկավարներին ուղղված նամակում փորձել է պաշտպանվել՝ պնդելով, որ ինքը պարզապես գաղափարական վեճեր է ունեցել Բակունցի, Չարենցի և մյուսների հետ, բայց երբեք անձամբ մատնագրեր չի գրել նրանց դեմ:

Սակայն պատմական փաստերը ցույց են տալիս, որ Զարյանի հրապարակային մեղադրանքները նպաստել են այդ գրողների բռնաճնշումներին: Թեև ուղղակի ապացույցներ չկան, որ նա անձամբ մատնագրեր է գրել ՆԿՎԴ-ին, հայտնի է, որ նրա հոդվածները հիմք են հանդիսացել Բակունցի և մյուս գրողների դեմ հարուցված մեղադրանքների համար:

Այսօր պատմագիտության մեջ գերակշռում է այն տեսակետը, որ Նաիրի Զարյանը, եթե ոչ անմիջական կազմակերպիչ, ապա հաստատ գաղափարական գործիք է եղել Բակունցի և այլ գրողների նկատմամբ ստալինյան ռեպրեսիաների իրականացման գործում: Նրա անունը կմնա երկակի նշանակությամբ. մի կողմից՝ որպես սովետական գրող, մյուս կողմից՝ որպես անձ, որի հրապարակային մեղադրանքներն ուղիղ նպաստել են իր ժամանակակիցների ողբերգական ճակատագրերին:

Հայ գրող, բանաստեղծ, արձակագիր, արվեստաբան, գրականագետ, ԽՍՀՄ գրողների միության անդամ Կոստան Զարյանը ծնվել է 1885 թ. փետրվարի 2-ին, Շամախի քաղաքում (Ռուսական կայսրություն):

1890թ.՝ հոր մահվանից հետո, ընտանիքը տեղափոխվել է Բաքու, որտեղ Կոստանն ընդունվել է ռուսական գիմնազիա: Այնուհետև ավագ եղբայրը նրան տարել է Փարիզ, տեղավորել Սեն-Ժերմեն քոլեջում, որն ավարտելուց հետո Կոստան Զարյանն ապրել է Կովկասում և մեկնել Բելգիա՝ ուսումը շարունակելու նպատակով: Բելգիայում ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1910-1913թթ. Զարյանն ապրել է Վենետիկում, որտեղ էլ Մխիթարյան միաբանների մոտ սովորել է հայերեն:

Առաջին գիրքը՝ «Երեք երգերը» գրվել է իտալերեն (նույնը հայերեն լեզվով լույս է տեսել 1931 թվականին):

1914թ., երբ Պոլսում Հեթանոսական շարժմանն էին ներգրավված հայտնի մտավորականներ, Կոստան Զարյանը՝ Դանիել Վարուժանի, Հակոբ Օշականի, Գեղամ Բարսեղյանի և Ահարոն Տատուրյանի հետ միասին, հիմնել է «Մեհեան» հանդեսը, որը լույս է տեսել 7 համարով՝ 1914թ. հունվարից մինչև հուլիս: 1922թ. Պոլսում լույս է տեսել Զարյանի հայերեն լեզվով առաջին գիրքը՝ «Օրերի պսակը», իսկ աշնանը Զարյանն ընտանիքով հաստատվել է Երևանում: 1922-1924թթ. համեմատական գրականության պատմություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում, սակայն 1924թ. կրկին մեկնել է Եվրոպա:

1925թ. Փարիզում հիմնել և խմբագրել է արվեստի, գրականության և փիլիսոփայության «Բաբելոնի աշտարակ» ամսագիրը (ֆրանսերեն), ապա մեկնել է Իտալիա: Բոստոնի «Հայրենիք» ամսագրում լույս են տեսել նրա «Անցորդը և իր ճամփան» (1926-1928), «Բանկոոպը և մամութի ոսկորները» (1931-1933), «Երկիրներ և Աստվածներ» (1935-1938), «Կղզին և մի մարդ» (1955 թվական) գործերը:

1944-1946թթ. հայագիտություն է դասավանդել Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում: 1946թթ. Նյու Յորքում հիմնել և խմբագրել է «Հայկական քառամսյակ» անգլերեն հանդեսը: 1952-1954թթ. արվեստի պատմություն է դասավանդել Բեյրութի ամերիկյան համալսարանում: 1961թ. ներգաղթել է Հայաստան:

Կ. Զարյանի մի շարք բանաստեղծությունների հիման վրա Տիգրան Մանսուրյանը ստեղծել է վոկալային երաժշտություն:

Կոստան Զարյանը մահացել է 1969թ. դեկտեմբերի 11-ին, Երևանում:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Նաիրի Զարյան փողոցը գրող, բանաստեղծ, արձակագիր, արվեստաբան, գրականագետ Կոստան Զարյանի անվամբ անվանակոչելու միջնորդությունը ներկայացվել է «Կողբ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամի կողմից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 16-րդ կետն առաջարկվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Նաիրի Զարյան անվամբ փողոցը և նրբացքն անվանափոխել Կոստան Զարյանի անվամբ՝ «Կոստան Զարյան փողոց», «Կոստան Զարյան փողոց, 1-ին նրբանցք»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**